Մասնագիտություն 31

«Նորաձևության տեխնոլոգիա»

«Հագուստի ձևավորում և կար»

1 ՄՐՑՈՒՅԹԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Մրցութային առաջադրանքի բովանդակությունը՝ հագուստի արտադրության հետ կապված աշխատանքներ են: Մրցակիցները ստանում են հրահանգներ, էսքիզներ և գծագրեր, նյութեր և պարագաներ: Test Project-ն ունի մի քանի մոդուլներ, որոնք կատարվում են հաջորդաբար: Յուրաքանչյուր ավարտված մոդուլ գնահատվում է առանձին՝ Worldskills SS (Համաշխարհային հմտությունների ստանդարտների սպեցիֆիկացիայի) համաձայն:

2 ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

- ✓ Առաջադրանքի անհատական կատարում
- ✓ Մրցութային առաջադրանքը պետք է կատարվի մոդուլային եղանակով
- ✓ Գնահատումը տեղի է ունենում մոդուլից մոդուլ:

3 ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

- ✓ Աշխատանքի կազմակերպում և կառավարում
- ✓ Հաղորդակցման և միջանձնային հմտություններ, խնդիրների լուծում
- ✓ Անվտանգության կանոնների պահպանում
- ✓ Նորարարություն և ստեղծագործականություն
- ✓ Մասնագիտական հմտություններ

  Անգլերենի իմացություն

4 ՄՐՑՈՒՅԹԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է՝

- ➢ տեխնիկական էսկիզների կատարում, վիճակահանության ժամանակ ընտրված գործվածքների հիման վրա
- ➢ հագուստի ստեղծում մակետային եղանակով, ըստ էսքիզի/լուսանկարի

- կանացի կիսաշրջազգեստի նախագծում, մոդելավորում և ձևաթղթերի տեղադրում կտորի վրա
- կանացի վերնաշապիկի մոդելավորում՝ ըստ բազային լեկալների, մշակում և վերջնական հարդարում։

ՄՈԴՈՒԼ I՝ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԷՍԿԻԶ

Մոդուլի կատարման ժամանակը՝ 1 ժամ

- Մրցույթի մասնակիցը պետք է կատարի կանացի հագուստի տեխնիկական էսկզը A3 ձևաչափով՝ հորիզոնական, գել գրիչով, սև և սպիտակ գրաֆիկայով։ Ցուցադրված մոդելների քանակը - պատրաստի հագուստ՝ 3 մոդել, բարձր նորաձևություն՝ 2 մոդել (առջևի տեսքը և հետևի տեսքը)։
- Էսկիզը արվում է պատրաստի սխեմատիկ կանացի ֆիգուրայի նկարի վրա (հավելված 1) և պետք է համապատասխանի ընտրված կտորի նմուշներին, սեզոնայնությունը (գարուն/ամառ, աշուն/ձմեռ)։
- Տեխնիկական էսքիզների ուղեկցվում են երեք գրաֆիկական բացատրություններով՝ խոշորացույցի տեսքով (հավելված 2)։

ՄՈԴՈՒԼ II.՝ ՄԱԿԵՏԱՎՈՐՈՒՄ

Մոդուլի կատարման ժամանակը՝ 3 ժամ

- Մասնակիցը պետք է մանեկենի վրա պատրաստի ուսային հագուստի մոդելը՝ ըստ էսքիզի/լուսանկարի, մակետային մեթոդով։
- Մոդելն ընտրվում է մրցութային առաջադրանքի օրը՝ պատահականության սկզբունքով։
- 1,5 ժամից հետո մասնակիցը գնահատման պետք է ներկայացնի ավարտված կամ անավարտ աշխատանք՝ զգեստի մոդելը մանեկենի վրա։

ՄՈԴՈՒԼ III՝ ԿԱՆԱՑԻ ԿԻՍԱՇՐՋԱԶԳԵՍՏԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ, ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ՏԵՂԱԴՐՈՒՄ ԳՈՐԾՎԱԾՔԻ ՎՐԱ

Մոդուլի կատարման ժամանակը - 5 ժամ

- Մոդուլի կատարման համար տրամադրվում են չափումներ և կիսաշրջազգեստի տեխնիկական էսկիզը:
- Մրցակիցը պետք է կատարի կիսաշրջազգեստի հիմքի գծագիրը, տեխնիկական մոդելավորումը ըստ էսկիզի:
- Հաջորդիվ պատրաստում է ձևաթղթերը՝ բոլոր անհրաժեշտ նշումներով և տեղադրում գործվածքի վրա:
- Ձևաթղթերը պետք է ամրացվեն կտորին, բայց Չ՛ ԿՏՐՎԵՆ:

ՄՈԴՈՒԼ IV.՝ ԿԱՆԱՑԻ ՎԵՐՆԱՇԱՊԻԿԻ ՄՇԱԿՈՒՄ և ՎԵՐՋՄԱԿԱՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ

Առավելագույն ժամանակը – 8 ժամ

- Մոդուլի կատարման համար տրամադրվում են բազային ձևաթղթերը և տեխնիկական էսկիզը:
- Մասնակիցը բազային ձևաթղթերի հիման վրա պետք է կատարի մոդելավորում՝ ըստ տեխնիկական էսկիզի: Ձևի, կարի և վերջնական հարդարի վերնաշապիկը:
- 8 ժամից հետո մասնակիցը գնահատման պետք է ներկայացնի ավարտված կամ անավարտ աշխատանքը՝ կանացի վերնաշապիկ մանեկենի վրա (կցվում է տեխնիկական էսկիզը):

Հավելված 1



Հավելված 2